

ւոր բացառութիւնը, կը տեսնենք զբա-
բառի ուսումը տկարացած, և անոր
տեղ աշխարհիկ բարբառը տիրացած :
Գիտութիւնը և ուսմանը ժողովրդե-
կան ընելու համար՝ հարկ կ'ըլլայ ժո-
ղովրդեան լեզուովը խօսել, և աշխար-
հիկ լեզուին մարքութեամբը թէ՛ աւելի
դիւրամատոյց և թէ՛ աւելի ցանկալի ը-
նել զբոց լեզուին ուսումը : Ժամանակը
պիտի ստուգէ այս փափաքը, կամ ա-
նոնց իրաւացի կարծուած երկիւղը՝ թէ
ասանկ բոլորովին օտարացնելով զբա-
բառի ուսումն, կամ մանկութեան քա-

նի մը տարիներուն յանձնելով, պիտի
կարենանք ունենալ լաւագոյն ելք մը՝
քան զոր ունեցան մեզմէ շատ աւելի
յառաջադէմ ազինք Եւրոպիոյ՝ լատին
լեզուին ուսմանը նկատմամբ : Բայց ե-
թէ լատինը՝ իրենց մէջ ուսումնականաց
լեզու է, զորաբառը՝ մեր հին հարցը,
մեր նախնեաց աւ թաղաւորաց լեզուն
է : Գէթ այս մտածութիւնը՝ պէտք է
զմեզ խրախուսէ՝ սյոյզպիտի զեզեցիկ յի-
շատակ մը իր մէջն ամփոփող լեզուին
յառաջադիմութեանն աշխատելու :

ԽՈՍՔ ՍՐԲՈՅՆ ԱՐԻՍՏԻԴԵԱՅ ԻՄԱՍԱՍԻՐԻ ԱՔԵՆԱՅԻՈՑ

(ՆՈՐԱՅԻՔ ՀՐԵՏԱՐԱՎՈՒԹԻՒՆ)

Ի շարակարգ աստուածաշնորհ եկե-
ղեցական դպրութեան, յետնորոց կտա-
կարանաց և գրուածոց առաքելաշաւիղ
Աշակերտացն, և յառաջ քան զմատե-
նագրութիւնս սեռաբար անուանեալ
Հարցն եկեղեցւոյ, որը յերրորդումն
ծագեալ դարու 'ի Զորրորդումն յաւէտ
պայծառացան, Հոգին Քրիստոսի եյեռ
յերկրորդումն դարու զՋատագովան ա-
նուանեալս (Apologistes) կրօնից իւ-
րոց . արք՝ որը ընդ հեզահամբոյր վար-
դապետութեան աւետարանին՝ զեղլե-
նական փրկիստիայիցն լծակցեցին ա-
րուստարանութիւն, զարմանալիչ զու-
թութեամբ երկուց աննմանեացն՝ ըզ-
բունն զմիակն բացափայլել ճմարտու-
թիւն . և զի ընդ հաւատոցն պնդու-
թեան ունէին և զհեթանոսական հրմ-
տութիւնն՝ առ 'ի զհեթանոսսն պա-
պանձեցուցանել՝ նոցին կուռ և կիրթ
լեզուաւ, բանք նոցին ոչ միայն առ այն
ժամու լսողսն, այլ և 'ի զկնի եկելոց
Հարց Սրբոց յոյժ մեծարեցան, և յա-
ճախ 'ի վկայութիւն ածան 'ի ճառս
իւրեանց : Այլ 'ի դադարել հեթանո-
սութեան 'ի Դ դարու, կամ իբրու ոչ

ևս կարեւորը ընդդէմ նմին Ջատագո-
վութեանցս, կամ վասն դժուարիմաց
բանից սոցին, ևս և առ հնութեանն,
նուազեցին օրինակք գրուածոցս, և
տակաւ խափանեցան, մինչև գրեալ թէ
և ոչ մի 'ի բանից քրիստոնեայ իմաս-
տասիրացն այնոցիկ, որպիսիք ոմանք
էին կուատրադոս, Արիստիդէս, Մելի-
տոն, Միլիտիդէս, Աթենագոր, Յուս-
տինոս, և այլն, անթերի եհաս առ մեզ,
բաց յերկոցուն յետնոցը . այլ պատա-
ռիկք ինչ համառօտք՝ առ Եւսեբեայ
կամ 'ի ճառս Հարց, բաւականը՝ ոչ 'ի
յազուրդ, այլ 'ի սրել և 'ի տանջել
զբաղց մտաց եկեղեցասէր բանասիրաց
ամենայն դարուց :

Առաջին 'ի Ջատագովս կամ զոյդ և
ուսումնականից առաջնոյն (կուատրադո-
սի) Արիստիդէս իմաստասէր և ճար-
տասան աթենացի, 'ի սկիզբն Բ դարու՝
ծանեաւ, ընկալաւ և պաշտպանեաց
զքրիստոնէութիւն, և սրբութեան ա-
նուամբ կրեցեաւ . 'ի զրդուել թշնա-
հաց խաչին զԱղբիւնոս կայսր, մինչ
յԱթէնան էր, 'ի հալածելն որպէս նա-
խորդ իւր Տրայիանոս՝ քրիստոնեայս,

համարձակեցան երկրորդին սոքա նախ դրել ջատագովութիւն զկրօնից և զհետեոյաց քրիստոսի, և մատուցանել առ նա. նա և ինքնին, ասեն, Արիստիդէս՝ առաջի նորին ինքնակալի արտասանեաց զիւր խօսան, յամի իբր 123. յաղթահարեաց զմիտս բռնաւորին, և ընկալաւ հրովարտակ դադարման հալածանացն. վասն որոյ և յոյժ հռչակեցաւ նա և արտագրութիւն իւր. այլ նորնպէս և ողբալի եղև կորուստ բանիցն. զի յետ յի դարու անծառնութեան թուի յամինեցուն. և թէպէտ լատիներէ ոմանք յիշեն յ' Ը և յ' թի դարս, բայց ըստ այժմու քննչաց՝ ոչ թուի տեսնալ կամ ընթերցեալ նոցա զայն, այլ 'ի վկայութենէ նախնի Հարց յիշեալ. և ամենանոր հեղինակը եկեղեցական պատմութեան և մատենագրութեան՝ իսպառ կորուսեալ համարին:

Օրհնեալ հոգի, միտք և մատունք մերոց հարց թարգմանչաց Հայոց. որք հրաշահիւսակ ուսականաւ իմաստասիրութեան իւրեանց, կամեցան իմն և կարողացան փորը 'ի շատէ՝ ցանցել գողջիր զրովանդակ երկասիրութիւն Հարց յունական եկեղեցւոյ, մասամբ նոցին հեթանոս նախնեացն բանահիւսութեանց, և գեղազարդեալ իւրեանց տոհմային ճոխ բարբառողն ածել թափել 'ի գանձարան դիւանաց և եկեղեցւոյ Հայաստաննայց. և մեզ յեանոցս յաջողեցին՝ յետ չորեքտասան բազմա, յեղանակ դարուց, իբրև 'ի ծածուկ մթերից և յանստոյգ յանկարծադիւտ դարանաց՝ մերձ ընդ մերձ հանել 'ի լոյս և 'ի վայելս ուսումնատենչ և հետաքնին մանկանց յառաջագէմն Եւրոպիոյ, գիրս և մատանան պատուականս, զորոց համբաւ հնացեալ հռչակէին դարը դարուց, և բնագիր կամ թարգմանութիւն չերևէր 'ի միջի. օրինակ իմն, գործք փլոնի եբրայեցւոց իմաստասիրի, յաւերժայիշատակ ֆրոնիկոնն Եւսեբեայ, ճառքն Սեբերիանու Գարալացւոց եպիսկոպոսի, Ս. Եփրեմի Համաբարբառ մեկնութիւն Աւետարանին, մեծին Ռսկիբերանի մեկնութիւն Եսա-

յեայ (չև ևս հրատարակեալ) և յԱնյայտից գրոց նորոց կտակարանաց՝ մերձաւորագոյնն քան զբնաւս 'ի վաւերականութիւն՝ Երրորդ թուղթն Պողոսի առ Կորնթացիս, յորմէ և մերս Լուսաւորիչ 'ի վարդապետութեան իւրում առնու վկայութիւն, այլովքն հանգերձ:

Ի շարս սոցին անկանի արգ և Արիստիդէս առաջին իմաստասէր քրիստոնեայ, երկար հատուածով միով Զատագովութեանն. զոր՝ թէպէտ և ոչ բովանդակի գործ և ոչ մեծաբանակ, այլ հնութեամբն և մանաւանդ եղական յատկութեամբ՝ ոչ սակաւ ընդունելութեան և յարգութեան արժանի կարծեմք՝ 'ի յարգողաց զաղբերս քրիստոնէական դպրութեանց. միանգամայն և վկայ ընդարձակութեան գրաւորաւ, կան ուսկանի կամ չըջանակի մերոց քաջաց թարգմանչաց:

Այս հատուած բանի գաղափարեցաւ յարժանաւոր հնաւանդ մազադաթեայ մատենէ գրելոյ 'ի Նլ թուականիս մերում, որ է 984 ամ Գրիստոսի: Այլ մատեան գրեալ յեւ ժի դարու կամ 'ի սկիզբն յաջորդին՝ մատոյց մեզ միւս ևս հատուած բանի նորին Արիստիդեայ (Արիստեայ) ըստ օրինակին՝ որ սխալագիր է), 'ի Գալուսն Աւագակիւն, արդարև իմաստակորէն կամ ճարտասանական արուեստիւ յերիւրեալ. և թուի ուրոյն ճառի մասն՝ քան ջատագովութեանն, մանաւանդ խօսեցելումն առաջի հեթանոս կայսերն:

Արդ որպիսի ինչ և են՝ գերկաքանչիւր զայսոսիկ պատուական նշխարս հնութեան, հայրութեան և քրիստոնէութեան, յեղեալ յեկեղեցական բարբառ արևմտեան եկեղեցւոյ և դասական դպրութեան, այն է 'ի լատին լեզու, յօժարափոյթ ըլձիւր ընծայեմք նախ 'ի փառս սրբոյ մօր առաքելական և կաթողիկէ եկեղեցւոյ. և ընդ նմին մերումս սեփականի՝ իբրու անդրանկադեղ և պաճուճազդեստ դատեր զըլխոյի և աջակացի. 'ի պատիւ սորին պաշտօնասէր և երկասէր թարգման-

չաց՝ մերոց բազմեալստ Հարց, և ՚ի պարծանս արդիւնապէս պարծողացն ՚ի նոցին. և ապա ՚ի վայելս համընդ սիրողաց և յարգողաց այսպիսեաց բանից, որք զառաջին բարբառս քրիստոսաբարող շրթանց՝ յետ այնքանեաց բազմադարեան զանխուլ լուծեանց՝ հնչեցուցանեն ՚ի լուր վերջոտնեալ ժամանակաց :

Իսկ առանձնակի նուիրի սոփերիկս այս՝ առ որ ՚ի մերումս ժամանակի և, ռանդնագոյն լեզու և զրիչ ջատագով սրբոյ եկեղեցւոյ և ուղղագնաց վարուց, արժանաւիպլ Տէր փելիքս Տիւբանլու, եպիսկոպոս Արեւիանու փռանկաց :

Monseigneur,

La respectueuse estime que ma Congrégation professe, depuis bien des années, avec tout le monde catholique, pour les mérites éminents de Votre Grandeur, s'unit à toutes les marques de la bienveillante amitié, dont Vous nous avez donné tant de preuves, et dernièrement encore par votre séjour et celui de votre digne Coadjuteur, à notre couvent de St. Lazare, pour exciter plus vivement notre désir de Vous témoigner aussi par quelque signe sensible notre sincère et profonde reconnaissance.

Voulant actuellement publier une partie jusqu'ici inconnue de la première, ou de l'une des premières Apologies Chrétiennes, celle du Saint Philosophe d'Athènes, Aristide, à qui pouvions-nous mieux la dédier, après l'Eglise, si ce n'est à Celui que nous vénérons comme son premier Apologiste à l'époque présente ?

Connaissant la bienveillance de vos sentiments à notre égard, j'ose espérer que Votre Grandeur voudra bien agréer notre faible hommage. Ce sont quelques pages seulement ; mais, Monseigneur, nous avons acquis l'assurance

par vos propres essais, que quelques pages suffisent souvent pour mériter l'estime universelle et immortelle. J'espère même que ces deux morceaux que nous publions, et qui par l'ordre des temps suivent de près les écritures des Pères Apostoliques, cachés depuis dix-sept siècles dans l'obscurité, et tirés maintenant, comme deux oboles brillantes et chaudes, du sein de l'Eglise Arménienne, cette noble veuve, et offerts sous vos auspices à la grande Mère, l'Eglise Catholique, seront encore mieux appréciés par tous ceux qui l'aiment, et qui veulent remonter vers ses sources glorieuses.

Daigne la Providence, qui veille et qui veillera toujours sur cette Eglise, conserver longtemps Votre Grandeur pour la gloire de la Religion, pour celle de la France en particulier, et pour l'admiration de la Congrégation des Mékhitharistes, sur laquelle j'implore votre paternelle bénédiction.

Agréez, Monseigneur, la nouvelle expression de tous les plus respectueux et plus dévoués sentiments de religieuse vénération de

Vénise, 6 Juillet, 1878.

Votre très humble Serviteur et Frère
en J. C.

† IGNACE GHURÉKIAN
Archev. et Abbé Gén. des Mékhitharistes.

Monseigneur,

Laissez-moi d'abord Vous féliciter de la précieuse découverte que vous avez faite. Ces vieux textes ont, de nos jours, pour l'apologétique, une très-grande importance, car ce sont des témoins de la tradition irrécusable ; et il était tout à fait nécessaire de publier cette découverte, qui n'est pas seulement précieuse en elle-même, mais qui encore Vous fera beaucoup d'honneur.

Vous m'en faites un trop grand à

moi-même en voulant bien associer mon nom à cette publication : j'accepte pour cette raison surtout que ce sera là un lien de plus entre votre Congrégation et moi.

Je pense que Vous ne manquerez pas de joindre au texte que Vous publierez une interprétation, et de commentaires, qui en fassent ressortir la valeur.

Pout-être aussi que cette découverte n'est qu'un prélude qui nous en présage d'autres.

Veillez agréer, Monseigneur, l'hommage de mes bien reconnaissants et dévoués respects en N. S.

Orléans, le 14 Juillet 1878.

† F. E. D'ORLÉANS.

Գաղղիերէն օրագիրն Le Monde, 'ի
1 դեկտեմբերի 1878, այսպէս ծանու-
ցանէր .

Les RR. PP. Mékhitaristes de Venise viennent de faire paraître un opuscule contenant une traduction arménienne qu'ils font suivre de la version latine, de deux discours de saint Aristide.

Saint Aristide, philosophe athénien converti au christianisme, continua, après sa conversion, à porter, comme saint Justin, l'habit des philosophes. En l'an 123, il présenta à l'empereur Adrien, dans la ville d'Athènes, une excellente apologie du christianisme, toute nourrie des meilleures sentences de la philosophie ancienne, qui ne fut pas sans influence sur l'assoupissement de la persécution. Usuard et Adon rapportent que saint Aristide défendit la divinité de Jésus-Christ non-seulement par des écrits, mais par un brillant discours prononcé en présence du même empereur Adrien. On peut conclure, d'après la forme de leurs paroles, que de leur temps on possédait encore l'A-

pologie de saint Aristide. Cet ouvrage, perdu depuis, a échappé jusqu'à nos temps à toutes les recherches.

Or la Providence a voulu que parmi les trésors de la littérature arménienne, entre autres ouvrages dont on ne possède plus les textes grecs, se soit rencontrée la traduction d'une partie notable de l'Apologie de saint Aristide. Cette traduction, qui date du V^e siècle, transcrite sur un parchemin du X^e, est ainsi arrivée jusqu'à nous, et les PP. Mékhitaristes viennent de la publier en l'accompagnant, comme nous l'avons dit, d'une version latine.

Un autre manuscrit arménien du XII^e siècle renferme un ouvrage, également de saint Aristide. Les RR. PP. Mékhitaristes le publient aussi, « pour le service, disent-ils, de la doctrine de la sainte Église catholique, en hommage aux glorieux Pères de notre Église et pour la gloire de la littérature arménienne », et nous pouvons ajouter au grand honneur de leur illustre Congrégation.

Les savants religieux ayant dédié cette publication à Mgr. Dupanloup, ont reçu la lettre suivante, écrite par l'évêque d'Orléans le matin même du jour de sa mort :

Château de la Combe, le 11 octobre 1878.

Au R. P. Paul Carékin, Secrétaire des Mékhitaristes, île Saint-Lazare, à Venise.

Mon Révérend Père,

Malgré le mauvais état de ma santé, je ne veux pas tarder à vous remercier du précieux envoi que vous avez bien voulu me faire au nom de Monseigneur votre Abbé.

Veillez bien lui transmettre tous mes remerciements pour cette nouvelle preuve de sa bonté envers moi, dont je garde un si reconnaissant souvenir.

Je vous prierai aussi de lui offrir

mes bien respectueux hommages, en agréant pour vous-même l'assurance de mon bien affectueux dévouement en Notre-Seigneur.

† FÉLIX, évêque d'Orléans.

Եւ բաղմահմուտ զաղղիացի կարգի-
նալն Քիզրա գրէր այսպէս 'ի Հռով-
մայ առ մեզ 'ի 28 նոյեմբերի 1878 .

J'aurais aimé à être l'un des premiers à vous offrir mon hommage de reconnaissance, en vous exprimant mon agréable surprise et mon joyeux em-

pressement à lire ce précieux et splendide opuscole de St. Aristide. C'est une découverte qui fait honneur à St. Lazare, et assurément la plus belle fleur qu'on ait déposée sur la tombe récente de Mgr. l'Evêque d'Orléans.

Un bruit vague etait venu jusqu'à moi de la découverte de l'apologie d'Aristide. Je pensais au texte grec, et desirais vivement que le bruit se confirmât. Quelque court que soit ce qui nous vient de votre inépuisable Arménie, tout y est d'or, et tout sent l'âge d'or de l'apologetique.

Հ Ա Ն Ա Չ Ա Ն Գ Ի Տ Տ Ե Լ Ի Ք

Հաղորդակցութեան միջնորդք . — Տնտեսագէտ մը այլ և այլ ազգաց հաղորդակցութեան միջնորդաց հետեւալ վիճակագրական հաշիւները կու տայ : Աշխարհիս բոլոր երկաթուղեաց շինութեանն համար գործածուած դրամա գլխոյն բովանդակութիւնն աւելի է քան 90 հազար միլիոն ֆռանգ : Այս երկաթուղիք ունին 62,000 շոգեշարժ կառք , 112,000 վակոն ճանապարհորդաց համար ու մէկուկէս միլիոն վակոն վաճառուց համար . և կը փոխադրեն տարին՝ հազար հինգ հարիւր միլիոն ճանապարհորդ ու տասն և վեց հազար միլիոն կենդինար վաճառք :

Տարուէ տարի Եւրոպայի մէջ գրեթէ երեք հազար միլիոն նամակք կ'երթնեն , որոնք ըստ ազգաց հետեւեալ կ'ըլլան : Անգղիա՝ աւելի քան զհազար միլիոն նամակք , Գերմանիա՝ 700 միլիոն , Գաղղիա՝ 366 միլիոն , Աւստրիա-Հունգարիա՝ 300 միլիոն , Իտալիա՝ 120 միլիոն , և այլն : Եւ եթէ ըստ անձանց բաշխուի , միջական հաշուով տարին կ'ընկնայ մարդ զոլս Անգղիա՝ 30 նամակ , Գերմանիա՝ 15 նամակ , Գաղղիա՝ 10 նամակ , Աւստրիա-Հունգարիա՝ 10 նամակ , և Իտալիա և նա .

մակ : — Ամերիկա նամակաց երթնելութիւնն է տարին 700 միլիոն . Ասիա՝ 150 միլիոն . Աւստրալիա՝ 50 միլիոն , Ալիքիկէ՝ 25 միլիոն .

Երկաթուղի ընդ մէջ Եւրոպիոյ և Հնդկաց . — Ռուսիոյ հաղորդակցութեանց և ճանապարհաց նախարարութեան օրագիրը վերջերս կը հրատարակէր Խոդզքո (Chodzko) գիտնականին մէկ առաջարկը նկատմամբ երկաթուղւոյ մը ընդ մէջ Եւրոպիոյ և Հնդկաց : Մինչդեռ լէսէքս կ'առաջարկէր , յամին 1875 , երկաթուղի մը որ Բարիզէն ճամբայ ելլելով դէպ 'ի վարսաւիա , յէն անցնի Օրէնպուրկ ու Փէշաւէր , և հասնի մինչև Կալկաթա , բովանդակելով գրեթէ 10,000 քիլոմէտր երկայնութիւն , ընդհակառակն Խոտզքոյ կ'առաջարկէ երկաթուղի մը որ Բարիզէն ճամբայ ելլելով դէպ 'ի վարսաւիա՝ անցնի Թիֆլիս , Փէշաւէր և հասնի մինչև Կալկաթա , բովանդակելով 9,000 քիլոմէտր երկայնութիւն : Ինքն հաշիւ կ'ընէ որ ժամը 42 քիլոմէտր միջին եւրագութեամբ , Բարիզէն կ'երթնցուի Կալկաթա ինն օրուան մէջ ծախելով 990 ֆռանգ :